



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6900
6901
6902
6903
6904

6900-6904
McGregor - Iowa

706 Long/4

176
177.

179
180



176 6

132
p 163

132
p 163

891.99-2 ԱՐԱՄ
Ար.

ԴԻՒՑԱԶՆ ՆԱՐԱՊԵՏ ՀԱՅՈՑ

ԹԱՏՐԵՐԳՈԽԹԻՒՆ 4 ԱՐԱՐՈՒՅՆ

ԵԿ ՄԻԿ ՊԱՏԿԵՐ

17 անգամէ առելի ներկայացուած՝
ՊԱԿԱՐԻՇ, ՈՈՒՄՈՒԻԱ ԵՒ ԱԽՍԴՐԻԱ. ՀՈՒՆԴԱՐԻԱ

ԳՐԵՑ

Վ. Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

(ի Կալաց 1891)



Դ. ՊՈԼԻ Ի Ա

Տպագր. Ա. ԱՅ.Գ.Ա. Ե.Ա.Ն.

1910

1930

20Ն ԵՒ ՅԻՇԱՏԱԿ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ

ՀԱՅ ԴԻՒՑԱԳՈՒՆԵՐՈՒ

ՈՐՈՌՈՅ

ԻՐԵՆՑ ԱՐԻՒՆՈՎՐ ՎԱՆԵՑԻՆ

ԲՈՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԲՈՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

ՊԱՇԱՐԱՄ

(2553-178)




180-2015

ՎԲ 180

ԾԱՆԹՈՒ .— Մոյրաքաղաքներու մէջ ներկայացնելու
իրաւունքը վերապահուած , իսկ քաղաքներու և դիւզե-
քու մէջ հասոյթին 10% գրկել Մարգարեան Գրատուն :

ԴԱՀԲԱՋ



Ա Ն Զ Ի Ն Ք

ԱՐԱՐ	Դիւցաղն Նահապետ Հայոց
ՎԱՏԱՄ	Քրմապետ և զօրավար Ճերունիք
ՑՈՂԱԿ	Տանուտէր Տարնոյ
ՆԻՒՖԱՐ	Մարաց իշխան
ԿՈՆՅԱԿ	Տանուտէր Տարնոյ
ՄԾԱԿ	» »
ՊԵՐԱ	Պատգամաւոր նուիրաբեր
ՀՕՐՈՅ	» »
ՊԱՍԼԻԿ	Մարաց զօրապետ
ԿԻՍԼԻՍ	» »
ՄՈՒԺԻԿ	» »
ԲԱԲԵԼԱԳԻ	Զինուոր մը
Ա. ԳԻՒԼԱԳԻ	Գուժաբերներ
Բ. »	
Ա. ԴԵՍԱՊԱՆ	Նինսս արքայի
Բ. »	

Զօրք հայոց, Բարելացիք, Կասլաթովկիացիք գերի
վիճակի մէջ :

Ա Ր Ա Մ

ԹԱՏՐԵՆԻԳՈՒԹԻՒՆ ԵՐԳԱԽԱՑՈՒՆ

4 Արար

ՏԵՍԱՐԱՆ Է ՀԱՅԱՍՏԱՆ

(Նախ բան զ՞՞ս. 1876)

Ա Ր Ա Բ Ա Ռ Ա Զ Ի Ն

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Ս Օ Ս Ե Ա Ց Ա Ն Տ Ա Ռ Ի Ն

Վ Ա Տ Ա Բ Ա Մ (առանձին)

Վասամ .— Ո՞հ, ի՞նչ անուշ և քաղցր սօսափիւն
սօսեաց Սրբազն անտառին, որ քաղցրախօս թուչունք
դրախտային, չեն համարձակիր իրենց ախորժալուր տա-
ղերն ու ալելուքն երգել : Վառկք կարկաչանոս՝ կը հու-
սին մեզմաձայն, զսպած իրենց կլկլացող ձայն : Մատղաշ
տունկք՝ և գեղատեսիլ անուշահոտ ծաղկունք, հազիւ
կանանչ մարդագետնին ներքեւէն կ'արձակեն իրենց անուշ
բուրումն : Ի՞նչ յուզիչ և խորհրդաւոր սօսափիւն : Ինձ
կը թուի թէ՝ միայն ազատն Հայկայ յաղթութեանց նա-
խերգանքի ժամանակ, այսչափ քաղցր, այսչափ հրա-
պուրիչ, այսչափ դիւթիչ ձայն ունէին, և այսօր քան

զայն հրապուրիչ, քան զայն հրաշալի, մի հոգեհոս ա-
լելուք է, մի երկնային նուագ է սա պարզապէս, որ
դիւցազն Արամայ փառքն կը պատմէ: Վերջապէ՛ս եր-
կինք իւր վճիռն արձակեց. Սօսեաց սրբազն անտառն
կը հաղորդէ թէ՝ Հարմայի որդին Արամը՝ պիտի գերա-
զանցէ իւր նախահարքը, բազմաթիւ յաղթութեամբ և
քաջագործութեամբ: Թորգոմազն Հայկ Տիտանեան հզօր
հսկայն՝ Բելը յերկիր տապալեց. մի միայն մտքի և հա-
մոզման ազատութիւնը ամբաստանութեամբ զրաւել ու-
ղելուն համար, իսկ Սօսեաց շշուկն կ'իմացնէ թէ՝ Արամ
մի քաջ հայորդի պիտի ջնջէ նաեւ անոնք, որք չեն ու-
ղեր Հայոց ազատ ալրին և բռնութեամբ կը կամին նո-
ցա քրտնաթոր աշխատանաց արդիւնքն իւլել:

Տարակուսիլ անհնար է Սօսեաց սրբազն անտառի
պատգամներու վրայ: (մտիկ կ'ընէ) Այո՛, Արամ տէր
պիտի լինի աշխարհի, պիտի յաղթէ բոլոր թշնամկաց. և
Նորա անունը յաւիտեանս պիտի յիշուի:



ՏԵՍԱՐԱԿԱՆ

ՆԱՅԱ ԵՒ ԱԿՐԱՄ

Արամ. — (մտախոհ) Վիճակս անտառնելի է, մի երկ-
սայրի սուր կ'սպաննէ դիս. Դուք ինձ առաջնորդեցէք
ո՛վ սրբազն տերեւք, որը նախընտրեմ սէր թէ հայրե-
նիք: Վատամ, Հայտատանի ամէն կողմը թշնամիք յար-

ձակելով գրաւեր են Հայոց հողերն , իւրեանց լրբութեան չափն ալ անցած է . կը պահանջեն որ հայն աշխատի իր սարուկ և իւր աշխատանքն դնէ թշնամեաց ոտից ներքեւ :

Ազատն Հայկայ որդւոյն որչափ ծանր է այս վիճակ , նոյնքան ծանր է , որ չեն թողուր գալ Հայաստանի խորն , իրենց հարց մօտ , և հետզհետէ թշնամիք կը յառաջանան Հայաստանի մնացեալ մասերու վրայ և միշտ կը նեղեն աղատ հայն . թէեւ նոյտ քաջութիւնը տեսնելով կը փախչին . բայց վնասը միշտ կը մնայ և աղատասէր հայը չուզէր փոխանակել իւր կորուսար թշնամեաց կորուսատով . իմ սիրելի հօրս Հարմայի մահն ալ թշնամիներն քաջալերեց , որ խուժեն Հայաստան և այժմ իմ վրայ կը ծանրանայ , այս բոլոր պատսսխանատուութիւնը . Հայրենիք զիս կը կանչէ դէպի Հայաստանի ոսնակոխ սահմանները : Իսկ Սիրանուշի սէրը զիս կը կաշկանդէ , խորհուրդ սիրելի Վատամ , խորհուրդ և պատգամ տուր այս սրբազն անտառէն :

Վատամ .— Կ'երդնում յանուն Սօսեաց սրբազն անտառին , հաղորդելով ձեզ , նորա անդարձ պատգամն , թէ՝ Արամ պիտի լինի աղատասէր Հայկայ ճշմարիտ յաջորդն :

Արամ .— Ի՞նչպէս :

Վատամ .— Յաղթելով Հայաստանի բոլոր թշնամեաց , պիտի տիրես երկրին : Հայկ՝ ցոյց տուաւ իր որդւոց և թոռանց թէ՝ բիւրաւորաց յարձակման կարելի է դիմաւդրել , սրտով միացեալ քաջարի փոքրիկ խմբով . իսկ դու պիտի ապացուցանես թէ՝ առանց անընդհատ կատաղի յարձակմանց՝ թշնամիք չեն սարսափիր : Հայկ յաւիտեանս պիտի յիշուի աղատ հայերէն , իսկ ձեր քաջարի

անունն համայն թշնամիներէն և օտարներէն պիտի հըռչակուի :

Արամ .— Սիրտս կը վառի հայրենեաց սիրով և եռ կ'ուխտեմ ինձ յանձնուած նրկիրն անկորուստ պահել :

Վասար .— Աւելի փառաւոր ապագայ կ'սպասէ քեզ, տերեւոց սոսավիիւնք, անընդհատ քո փառքը կը պատմեն :

Արամ .— Կ'զգամ մի ձգտում, մի ներշնչութիւն գէսի յառաջ, երեւակայելով պատերազմի խառնիճաղանձը հողիս կը հրճուի : Ես լաւ համոզուած եմ, որ գոյութեան կոռոին, յառաջ գնալու համար խաղաղ աշխատանքն հերիք չէ, այլ պէտք է զէնքի ալ դիմել, երբ կուգան ու խաղաղ աշխատանքի արդիւնքն բռնութեամբ կը խլեն :

Ընմեղ տեղը արիւն թափելն ոճիր է, իսկ բանութիւնը հալածելու համար, ամենասուրբ և միակ միջոցն է : Կ'զգամ ինձ ուժ, կորով, հայրենիքիս շահերն պաշտպանելու, բայց կը տատանիմ, Սիրանուշէ հեռանալու գաղափարը՝ զիս կը տիրեցնէ : Մի տիսուր նախզգացում կը պատէ հողիս, Վատամ, արդ առա դու, Սիրանոյշի բազդը գուշակէ, ես պատրաստ եմ հայրենիքիս համար մեռնելու. ինձ փառք հարկաւոր չէ. մոգական տերեւոց սոսավիիւնն Սիրանոյշ, Սիրանոյշ միայն հնչեն և անոր երջանկութիւնը գուշակեն :

Կը գնամ ես պատերազմ, Վատամ, բայց կը վախսնամ որ, բացակայութեանս միջոցիս Վատպութականի օրիորդին մի արկած պատահի :

Վասար .— Սուեաց նուիրական անտառը, Արամի զինուց յաջողութիւններու արձագանքը միայն կուտան, նորա քաջութեան արկածներն միայն կը պատմեն . Արա-

մայ փառքն ու Հայաստանի անունը, մինչեւ ասաղերը
կը բարձրացնեն :

Արամ . — Սիրանուշիս համար գուշակէ համաձակ,
մի՛ ծածկեր խնձմէ ոչինչ գաղանի, Արամը այնչափ թու-
լամորթ մի՛ կարծեր, նա չընկճիր անհատական դժբաղդ
արկածներու բեռուն ներքեւ :

Վասամ . — Ո՛չինչ գիտեմ . . . :

Արամ . — Մի՛ ծածկեր խնդրեմ, ասա՛, որ երբէք
Սիրանուշի սէրը վայելելու պիտի չարժանանաս, ասա՛ թէ՝
պիտի իյնաս պատերազմի դաշտի վրայ և նա սեւերու մէջ
հալու մաշ պիտի լինի, ասա՛, նա քեզմէ պիտի խլեն . . .
բայց ո՛չ, մի ասէր այդ, թէ՝ նա քեզմէ պիտի խլեն . . .,
Ահ, այդ բանի առաջ, ինքզինքս տկար կզգամ . առանց
վասպուրականի փամբիշին՝ Արամ մի խեղճուկ դառ-
նուկ է և փոքրիկ մանուկներն անդամ կարող են ջախ-
ջախել :

Վասամ . — (մի կողմ կը քաշուի) մտածկուս :

Արամ . — (իր նշանածը երեւակայելով) Այս խոր-
հուրդաւոր անտառին մէջ, մի վարկեան, մի բոլէ միայն
քեզ տեսնէի, քո նազելաշուք մէջքը զրկէի. քո վարդ-
շրթունքներէ հրաժեշտի ողջոյն լսէի, և յայնժամ եր-
թայի հայրենիքի աղատութիւնը ձեռք բերելու կամ
քաջաբար մեռնելու . . . ահ, ի՞նչ խջխոց է որ կը լսեմ,
այն ի՞նչ ձիւնէն սպիտակ ստուեր է, որ կը չըջի. այո՛,
այս պերճ քալուածքը Սիրանուշին է, նա ա՛լ իւր վըշ-
տերու ալիքներէն մզուած, այս անտառին մէջ խաղա-
ղութիւն կը փնտոէ . . . երթամ (քայլ մը կ'առնէ) ո՛հ,
կ'արգիլէ զիս իրեն մօտենալ. ահ, օդային համբոյրներ
կ'ուզդարկէ, երթալ կը հրամայէ, ահ . . . էր . . . : (Չեռ-
քը ճակտին կը դնէ) :

Վասամ .— (Արամին մօտենալով) : Արամ :

Արամ .— (Կ'ուշաբերի) կը ցնորիմ ես , երթևակայութիւնս կը բորբոքի , Վասամ , մէկ կին մարդ , Արամը կը տկարացնէ :

Վասամ .— Երիտասարդ նահապետ . մեծ գործը՝ աղնիւ գոծը . մեծ և աղնիւ գործ կը պահանջէ . դու կանչուած ես , ամբողջ հայրենիքդ աղատելով՝ բոլոր աշխարհի առաջ պատկառելի ընել զայն , և քո անելիք այդ մեծ գործը , աւելի զին կ'ստանայ , երբ դու կը զոհես քո անդին Սիրանոյցը և կը հեռանաս անկէ :

ՏԵԱՄՐԱՆ Գ.

ՆՈՅՆԻՑ , ՅՈՒԱԿ , ԿՈՌՆԱԿ ԵՒ ՄՇԱԿ (կը մտնեն)

Յոլակ .— Քաջասիրտ տէր , Հայաստանի արեւմտեան կողմերը ձեր պաշտպանութեան կարօւ է :

Կոռնակ .— Հայկազն նահապետ , Հայաստանի հարաւային կողմը մեծապէս կը տառապի թշնամեաց ստէպ յարձակումներէ :

Յոլակ .— Թէեւ տէր , ամէն պարտքա գործադրեցի , վանելով թշնամիներն և խմացնելով թէ՛ երկրին մնացեալ մասերն ապահովելու սին յուսով ափ մը հող , այլ եւս չէ կարելի զոհել :

Կոռնակ .— Մեր թշնամիներն վատօրէն կը կոռւին :

և հայ զինակիր մը տեսնելնուն պէս կը փախչին . բայց կրկին պտէալ յարձակումներ ընելէ չեն դադրիր :

Մշակ .— Հայկազն նահապետ . Հայաստանի ամէն կողմէն պատգամաւոր եկած են և ամէնքն ալ Ցոլակի և Կոռնակի նման թշնամիներու բրածներն կը պատմեն . Նկարագրելով իրենց կրած տառապանքներն : Տանուեկրեներ ձեր քաջութեան ապաւինած , համոզուած են թէ՝ դուն միայն կարող ես զանոնք բոլորովին վանել Հայաստանի սահմաներէն :

Արամ .— Ճշմարիտ են այս ամէնը , բայց կը տատանիմ , ովք երկինք . . . :

Վասար .— Պէտք չէ տատանիլ . իշէ քո հօր խրատն , խոնարհէ ճակատագրիդ առաջ . ամէն կողմէ կը լսուի Սրա՛մ , Սրա՛մ հասիր և ազատէ մեր կոյս աղջիկունք ու տղայք . տղամարդիկ կը գոչեն Սրա՛մ , ալ բաւ է որ թշնամին մեր պատոյն հետ խաղայ յափշտակելով մեր ամուսինքն . ծերք կ'աղաղակեն , Սրամ , ալ բաւ է որ թոյլ և տկար ոտքերով անտառներն ապաւինիմք : Իսկ մայրեր կասեն , Սրամ , Հայաստանի ճշմարիտ զաւակն էր կը վարանիս , մինչ ցերք սպասեմք : Արամ՝ ես որ արիւն թափելու հակառակ եմ , պատերազմի կը գրգռեմ զքեզ , երեւակայեցէք թէ՝ ինչ անելանելի դրութեան մէջ է ինկած հայրենիքը և ուրիշ ելք չը կայ ազատելու , բայցի պատերազմէ :

Ցոլակ եւ Կոռնակ .— (միարեան) կը հաստատենք ալ ժամանակը հասած է :

Մշակ .— Այո՛ , պատերազմ՝ կը ցանկայ բոլոր ժողովուրդը , մեր բոլոր զօրապետներն ու ծերերը . իսկ միեւնոյն եռանդով ոգեւորուած են , քսանէն երեսուն տարեկան բոլոր քաջ տղամարդիկն , որ Սրարատայ դաշտն

հաւաքուած ալ չեն ուղեր տանիլ ստրկութեան դասն
տառապանքը : Ազատն Հայկի խաղաղ որդիները՝ ալ մահ
կը վնասւեն : Ամէն մէկը իւր սիրտն և կեանքն ազատ
կամքով կը զոհէ իւր եղբօր ազատութեան համար :

Արամ .— Կարծե՛ս բնութեան խորհրդաւոր ձեռքն
մեղ հաւաքեց այս սրբազան վայրը, այո՛, հարկ է Հայ-
քենիքի փրկութեան սուրբ պատերազմը հրատարակել :
Զեր ներկայութիւնը՝ այս հմայող անտառին մէջ և Զեր
բերած տխուր լուրերն թշնամեաց յարձակումներու և
Զեր տուած տեղեկութիւններն ժողովրդի կտրիճ ընդդի .
մութեան, զիս կը հիացնեն : Արամն ա՛լ կը հմայուի
այս խորհրդաւոր անտառին մէջ, Զեր սրտաճմիկ խոս-
քեր, աղեկտուր տեղեկութիւններ, խորապէս կ'ազդեն
ինձ, այո՛, սիրելի հայրենակիցներս, ի զէն և ի պատե-
րազմ :

Վասար .— Երկնից վճիռն է որ կը կատարուի,
պէտք է Արամայ փառքն հռչակուի և հայրենիքն ա-
զատի :

Յոլակ .— Իսկ թշնամեաց սիրտը՝ թո՛ղ արտեիրքով
և սոսկումով լեցուի :

Կոռնակ .— Թող կորսուին և ցրուին փոշիի պէս :

Մօակ .— Ասկից ետքը, գլխիկոր ուխտ հայուն
համարձակ չը նացիլ : Երթամ, ուրախութեան աւետիս
տամ, (Կ'ելնէ)

Վասամ .— Հայկազն նահապետ , մեծ է Զեր պաշատոնը , մեծ պիտի լինին Զեր գործերն և յաւիտեանս յիշառակելի Զեր վառաւոր անունն :

Արամ .— Պարտիմ ուքեմն , այս նուիրական Սոսեաց անտառին առաջ կրկնել իմ Սրբազն ուխտ , թէ՝ Հայտատանը պիտի պաշտպանեմ՝ ջնջելով նորա կատաղի և բարբարոս թշնամիքն . հոչակելով նորա վառքն ու մեծութիւնը և իր որդւոց քաջութիւնը : (ծունկի գալով) թո՛ղ մեռնի Արամ , թող յաւիտեանս ապրի Հայտատան :

Վասամ .— Ճմիշտ ապրի՝ մեր Հակազն նահապետի առաքինիութիւնը ու անձնուիրութիւնը :

ՆՈՅՆԻՔ ԵՒ ՄՇԱԿ ԱՅ ՄՏՆԵ

Մշակ .— Հայկազն նահապետ Սիւնեաց և Արաբատեան բանակներուն , երբ Զեր որոշումը հաղորդեցի , ամէնքն այնպէս վառուեցան Հայրենիքի սիրով , որ կարելի չէ նկարագրել . անոնց աչքերն արիւնով լեցուեցան և գոչեցին , կեա՞նք մեր քաջարի նահապետին . վրէժ և մահ թշնամիներուն . մեր զօրքերն այնպէս բորբոքած

ևն, որ թշնամիներու բանակներն պիտի լավեն իրենց թուրերով :

Արամ .— Եղբարյա ազատութեան սէրն է, որ զի՞րենք բորբոքած է և կը մղէ յառաջ :

Յովակ .— Նաեւ Զեր քաջ ու արի անունը :

Ամենիք .— Այո՛,

Արամ .— Աւրեմին, պէտք է ազատութիւնը մեր նշանաբանը լինի և գո՞ւ պէտք չէ լինիմք ստրուկ վիճակէ, թող չը զօրանայ թշնամոյն կարծիքն, թէ՝ Հայը երկչուտ է և գտնուած վիճակէն միշտ գո՞ւ . ո՞չ, պէտք է Արարատեան անզսպելի առիւծներու կատաղութիւնը ցոյց աալ, թող չասեն հայն կը վախէ, այլ ասեն նա համբերող է :

Կոռնակ .— Սակայն հիմա համբերութիւնը սպառած :

Արամ .— Վայ անոնց, որոնք հայոց համբերութեան վախճանին կը վիճակին . Օ՞ն, դուք եւս կրկնեցէք Զեր ուխտն այս սրբազան անտառին :

(Ամէնքը ծնկաչոք և թուրերը քաշած) :

Վասար .— Սրով խլուխն մեր կեանք, վասն Հայրենիաց փրկութեան, ասլրինք մեր քաջ նահապետի համար :

Արամ .— Հայտատանի համար, ո՞վ քաջաղունք :

Ամենիք .— Կեցցէ Արամ, կեցցեն Հայք :

Արամ .— Աւրեմին, հայրենիաց պաշտպանութեան համար մեր մաղթանքն ընեմք :

Ամէնքն ծնկաչոկ կ'երգեն

Տէր, կեցո՞ղու զիայւ .

ԶԳԻ ՎԱՐԱԳՈՅՆ

ԱՐԱՐ ԵՐԿՐՈՒԹ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՄՅԱՅԱՅ ՆԻԿՎԱՐ ԻՇԽԱՆԸ, ՊԱԽՎԻԿԻ, ԿԻՄԿԻՍ ԵՒ ԶԵՐՔ

Նիւֆար . — Զօրականներ , վերջապէս Հայերը մէկ քանի մանր մունր ընդհարումներէ ետքը , այսօր մեր դէմը ճակատած են : Սակայն գիտցած եղիք , Հայերը կը նմանին այն տեսակ բոցերու որ չեն այրեր , մոխիրներու ներքե թաղուած կրակ մը՝ աւելի կիզիչ է , քան ահագին բոց մը՝ որ այրելու ոյժ չունի : Դուք բնաւ մի՛ վհատիք քանի մը թեթեւ անյաջողութիւններէ , եթէ քաջաբար կռուինք , յաղթութիւնը մերը պիտի ըլլայ , տեսէ՛ք մենք որչա՞փ յառաջացած ենք անոնց երկիրներուն վրայ : Մի՛ մոռնաք թէ՝ անոնք մեզի համար կ'աշխատին , անոնք մեր ոչխարներն են , անոնց կեանքը մեր ձեռքն է , և իրենց ունեցածը միշտ մերը և այս պիտի ըլլայ շարունակ այսպէս : Զանալու ենք չը զրկուելու համար մեր կաթնտու ոչխարներէն . անոնք չէին յանդգնէր մեզի դէմ կռուիլ՝ եթէ անոնց փորձառու ծեր նահապեաը , վերջերս մեռած չըլլար : Անոր յաջորդը անմիտ պատանի մըն է , քիչ մը կրակոտ բնութիւն ունե-

նալուն, քաջ է կ'ըսեն, որ կարելի է իրենց համար ըլ-
լայ: Իսկ Մարացս դէմ ամենատկար արարած մըն է, և
այսօր շատ հաւանական է, որ գերի կ'իյնայ մեր ձեռքը
կամ մեռնի:

Զօրապետներ, այն խեղճ պատանին, մեր դէմ իրեն
նման երեք ըիւր զօրքով ճակատած է, մեր արիւնով
գնոււած երկիրները ետ պահանջելու համար: Անփորձ
տղայ, չը գիտեր թէ՝ հինգ ըիւր Մարաստանցիներ իւ-
րեն դէմ ունի. որո՞նք իրենց տեղէն եթէ շարժելու
պէտք ըլլայ, չը բաւէր քսան բիւր Հայեր:

Պաւլիկ.— Մեծազօր ահեղ իշխան, չեմ կարծեր որ
Հայերն համարձակէին Մարաց վրայ յարձակիլ, եթէ այդ
յանդուզն պատանին չըլլար: Իսկ այս վերջի մեր քանի
մը վոքրիկ անյաջողութիւնները՝ անօնց մեծ քաջալերու-
թիւն տուին:

Կիսկիս.— Վեհափառ Նիւքեար, Տէր և իշխան
Մարաց հզօր բանակին, վճռական շարժում մը՝ կարող է
Հայերը բոլորովին ցրուել:

Նիւքար.— Շշմարիտ է, սիրելի զօրապետներս,
Հայերը շուտ բորբոքող և շուտ ալ յուսահատողներ են.
անգամ մը բուռն զօրութիւնով եթէ յարձակինք անօնց
վրայ, կը սարսափեցնեմք զանոնք... ալ անկից վերջ,
եղջուրնին կոտրած եղերու նման, ուղած կողմերնիս կը
քշենք: Օ՞ն, զօրապետներ, անգամ մըն ալ կոռուինք,
բայց մահու չափ:

Կիսկիս.— Տէր, անփորձ երիտասարդ մը՝ կ'ուղէ
իրեններով կորսուիլ:

Պաւլիկ.— Թո՞ղ գայ Արամ, թո՞ղ գան Հայերը,
Մարաստան անբաւ գերիներու պէտք ունի:

Նիւքար.— Սիրելի զօրապետներս, ցոյց տանք մտ-

բած քաջութիւն, իսպառ ջնջենք Հայաստան անուն հարկէ
է ցոյց տալ բոլոր ազգերու թէ՝ Մարաց հակառակ ողը,
պէտք է յանձն առնէ բոլորովին կորսուիլ:

Պաւլիկ.— Կեցցէ մեծն Նիւքար:

Կիսկիս.— Տա՞նք վերջին հարուածը:

Նիւքար.— Օն, երթամք դիմաւորել թշնամին:

Պաւլիկ եւ Կիսկիս.— Երթանք միասին:



ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԹԻՐԱ ՀՈՐՈՅ ԵԽ ԳԻՒՂԱՅԻ ՊԱՏԳԱՄՄԱԽՈՐՆԵՐ

Պերճ.— Անընդհատ լսում ենք զէնքի աղմուկը և
չենք կարող համնիլ բանակին. անչուշտ թշնամին փախա-
չում է, և հայոց բանակը հաղածում է՝ վատերը դէպի
հարու, թէեւ մենք հետեւում ենք յաղթողներին: բայց
թշնամիի դիակներից զատ, ոչնչ չենք տեսնում. բոլորն
եւ դետինը փոռուած անա, էսպէս:

Հօրոյ.— Մահը քաջերին չէ մօտենում կարծես:

Պերճ.— Իրաւունք ունեցողը, քաջ և անվախ է
լինում:

Հօրոյ.— Ազատութեան վարժուողը՝ դերութեան
լուծը չէ կորողամնիք և մահը աւելի քաղցր երեւում է:

Պերճ.— Ճշմարիտ ասում ես Հօրոյ. բայց մարդու,
իր կիանքը պէտք է կնքէ դերութեան դէմ կոռելով:

Հօրոյ .— Շատ ճիշտ ասում ես Պերճ , ահա , Արամի
պատերազմը հայոց աղատութիւնը խլողների դէմ է . ե-
քանի՛ թէ՝ մենք էլ վաղուց մասնակցած լինէինք :

Պերճ .— Արամ՝ այդ փառքն երիտասարդների պահեց
և նոքա միայն դէնքի դոչեց . միթէ՝ մենք էլ մեր
փոռքը չենք կարող նոցա փառքին միացնել :

Հօրոյ .— Ինչպէս :

Պերճ .— Կամաւոր դինուոր լինելով , չես համկնում
ի՞նչ կասեմ , միթէ մենք էլ չենք կարող դրւել :

Հօրոյ .— Ի՞նչու չէ հաճութեամբ , ես էլ կը գնամ
Պերճ : (Փողի ձայնը կը լոսւի)

Պերճ .— (մաիկ կ'ընէ) Հօրոյ , կարծես պատերազմը
վերջացաւ , հեռուից փողի յազթական ձայներ լուսում են :

Հօրոյ .— (կը մօտենայ դիտելու) Ահա , երեւում են ,
պատրաստենք մեր պսակները , մեր նահապեաի յազ-
թութիւնների համար :

Պերճ .— Այս , շատ մօտ երեւում են , զայիս են
երգելով :

Երգ մը , (Հապա քաջազսներ) :



ՏԵՍԱՐԱՆ Ե .

ԿԱՅԵ , ՄԵՍԻ ԵՎ ՎԱՍՈՒ ԶԻՒՈՒՅՆԵՐՈՒ

Մշակ .— Քաջազտն զինուորներ , ահա Արամի որո-
շած հանգստութեան տեղը . հանգստացէ՛ք և վստահ ե-

զիք թէ՝ ասկից ետքը, ո՞չ մէկ Մարաստանցի կարող է Հայաստանի սահմաններու մօտէն անցնիլ: (Զինւորք կը մեկնին Առակի հետ):

ՏԵՍԱՐԱԿՆ Զ.

Ն Ա Յ Ն Վ

Պերճ. — ԱՇԽ, Հօրոյ. աչերս արտասուքով լեցւում են, ի՞նչու մեր երիտասարդութիւնը չենք նուիրել հայրենիքին. ի՞նչու սարկօրէն ծառայել ննք բռնաւորների:

Հօրոյ. — Ի՞նչու էղակէս խօսում ես, ո՞վ խնայում էր իր արիւնը տալ հայրենիքի ազատութեան: Բայց ափսոս չենք ունեցել այն ժամին մի Արամ:

Պերճ. — Ծերութեան մէջ, արիւնս բորբոքում է:

Վասար. — Դուք եւս յաղթութեան լուր տարէք Հայաստան:

Պերճ. — Սահմանագլուխ գաւառների մէջ, վաղուց տարածուել է յաղթութիւնների համբաւը և մենք եկել ենք յանուն ժողովրդեան շնորհաւորել մեր քաջ Նահապետը:

Հօրոյ. — Եւ մեր արիւնը խառնել հայրենիքի պղտութեան թափուած նուիրական արիւնների հետ:

Վասար. — Ահ, հակառակ ձեր տարիքին, սրտերնիդ դեռ շատ երիտասարդ է. բայց արդէն յաղթութիւնը մերն է և ալ տրիւն թափելը աւելորդ:

Պերն .— Տէր , մենք մտադրել էինք մեր սիրտն էլ նուիրել այս նուէրների հետ , մեր քաջ Նահապետին :

Վասար .— Լաւ , աստ կացէք ուրեմն , զի մեր նահապետն այստեղ պիտի հանգչի . ահա մեծ պատերազմի վայրն , ուր խարդախ Մարաստանցին՝ Նիւքարն գերի անկաւ նորա ձեռքն , Արամ այն ատեն բարձր ձայնիւ դոչեց իւր գօրաց . այդ դաշտին վրայ դուք հանգիստ պէտք է առնէք և ես այս ըլուրին վրայ :

Պերն .— Բանաւորը՝ գերի , վաղենք Հօրոյ , վաղենք , և ամբողջ Հայաստան ոտք հանենք , որ ուրախութեան տօն կատարեն :

Հօրոյ .— Նիւքար գերի . . . երանի թէ մենք էլ մասնակցած լինէինք այս փառաւոր յաղթութիւններին :

Վասար .— Արամ՝ այնպիսի՝ արագութեամբ հասաւ ետեւէն և բանեց Նիւքարը , որ չէ՛ կարելի պատմել : Թը նամեաց փախուստն և մեր քաջարի գօրաց արշաւանքն՝ նկարագրել անկարելի է : Նիւքար գերի և բարեկամական դաշինքի համար Արամայ ոտքերն կը լիզէր : Ահա , ազատութեան պաշտպանը՝ Արամը կը մօտենայ , բարձր բոնեցէք ձեր պսակներ :

ՏԵՍԱՐԱՆ Է .

ՆԱՅԵՔ , ԱՐԱՄ , ՄՇԱԿ ԶԵՆԱԿԱՐՆԵՐՈՒ , ԵՒ
ՆԻՒԳԵԱՐ ԿՈՂԵԱԼ .

Արամ .— Հը՛ , խարդախ Մարաստանցի , ճանչեցիր Հայոց քաջութիւնը :

Նիւֆար .— Արամ , նկատէ որ կապուած խեղճ գերի մը ևմ և մի՛ նախատեր զիս :

Արամ .— Քաւ լիցի քեզ նախատել . քո մինչեւ հիմա գործած բռնութիւնք , զրկանք և ոճիրք են քո նախատինք : Իսկ խարդախ Մարաստանցի որ կասեմ , ոչ թէ նախատելու . այլ քեզ լաւ ճանչցած լինելս յայտնելու համար է :

Նիւֆար .— Արամ , ինդիր մը միայն ունիմ , դու սպանել զիս :

Արամ .— Ե՞ս , իմ ձեռքով , այդ երազիդ մէջն ալ չես տեսներ , ոճրագործը սպաննել՝ դահիճներու գործ է և հրապարակի վրայ : Մոռցար խաղաղասէր , աշխատող և արդիւնաբերող մի դրացի ժողովրդեան անմեղ արիւնը , որ չը խնայեցիր թափել տալ քո ճնշած , հարստահարած հայրենակիցներովդ : Անօրէն , դահիճներու ձեռօք պէտք է սատակիս , Արմաւիրի պարսպէն թերաքամեալ պիտի կախուիս , որպէս զի այն բարձրութենէն լաւ տեսնես քո աւրած գիւղեր , արտեր և մանաւանդ արիւնով արցունքով ներկած հողերդ : Ամբողջ Հայաստան քո դիակին տեսութեան պիտի դայ և տօն կատարէ :

Վասար .— Ո՛չ միայն Հայաստան , այլ և Մարաստան պիտի ցնծայ , որ ազատուեցաւ ահեղ բռնաւորէն : Նիւքար՝ աւելի անտանելի էր իւր բնիկներուն . չը տեսա՞ր խեղճ Մարաստանցի պատերազմիկներն , պատառատուն պատառուած զգեստներով և մեծ մասամբ ըսրիկ : Վախերնուն տգէտները յիմարաբար կը կռուէին իրենց շղթաները աւելի ծանրացնելու և իւրեանց հարստահարչին աւելի ոյժ տալու համար :

Արամ .— Հետո քաշել պիտի տամ պատերազմի դաշտին վրայ , որպէս զի իւր աչքով լաւ տեսնէ Հայոց

քաջութիւնը և վերադարձիս Արմաւիրի պարփսպէն կախել կռւտամ իրր արժանաւոր պատիժ իւր չարութեանց .
սկզ դու այն ասա Վատա՛մ , ի՞նչ լուր Հայաստանին :

ՎԱՏԱՄ .— Հայաստան լսելով ձեր մեծամեծ յաղթութիւնք , պսակներ է ուղղարկել պատգամաւորաց միջոցաւ : Իսկ եթէ լսէին այս խարդախ Մարաստանցւոյն բոնութիլը , ամբողջ Հայաստան բանակը պիտի վազէր նորհաւորելու : Տէր նահապետ , անա պատգամաւորներն որք կ'ուղեն իրենց սիրտն և արիւնն եւս նուիրել հայրենիքի սուրբ գործին :

ՊԵՐԱ .— Ծնորհ արէք ընդունիլ Տէ՛ր , այս դոյզն ,
այլ սրտաբուխ նուէրներ : (գալինեայ պսակ մը) :

ՀՕՐՈՅ .— Եւ սա՝ աղջիկան մը՝ անմեղ սիրտի օրինակն ու նուէրն : (գտանուկ մը կամ ծաղկեփունջ մը) :

ՊԵՐԱ .— Մեր սիրտն էլ միասին Տէ՛ր :

ԱՐԱՄ .— Գոհ եմ , տշխատաւոր մշակներ , ազատութեան զինուորներ էք այլ եւս , Հայրենիքի համար կուղներն՝ ո՛չ ոք կարող է արգիլել : Մշակ , կամաւորաց բանակը տարէք : (Մշակ կը մեկնի պատգամաւորներու և Նիւքարի հետ)

ՏԵՍԱԲԱՆ Բ.

ՎԱՏԱՄ ԵՒ Ա.ՅՈՒ

ՎԱՏԱՄ .— Հայկազն նահապետ , կամաւորաց գունդն հետզհետէ կ'ստուարանայ ; ամէն կողմէ եկող նորեկներով :

Արամ .— Երբ ինքնահրաւեր ազատասէր հայորդիք ,
կ'ուզեն մարտնչիլ իրենց թշնամեաց դէմ , իմ հոգիս ու-
րախութեամբ կը լեցուի :

Վասար .— Սակայն Տէր , կը վախնամ , որ երկիրը
անմշակ մնաց :

Արամ .— Ո՞չ երբէք , հայ կինն և փակասուն հայու-
հիք՝ Հայաստանի մշակներ են ի հարկին :

ՏԵՂԱՐՄԱՆ Թ.

ՆԱՅԵՐ ԵՒ ՄՇԱԿ

Մօակ .— (ներս մանելով) Հայկազն նահապետ , յաղ-
թութեամբ յղփացած բանակներն ու նորահաս կամաւոր-
ները պատերազմ կը կոչին :

Արամ .— Այո' , յառաջ պէտք է մզել մեր զօրքերն
դէպի Պայտապիս , և վանել այն հարստահարիչն ալ . Ս-
րամայ սուրբն այլ եւս իւր պատեանին մէջ հանդիսա պիտի
չը մնայ՝ մինչեւ որ Հայաստանի ամէն կողմէն չը վանէ
իւր թշնամիներն : Արդ՝ Վատամ , քաջազուն երիտասար-
դաց բանակն Զեր խոհեմութեան կը յանձնեմ , որ պիտի
բռնիս աջակողմն : Իսկ դու Մշակ , Մանաւազեան բա-
նակներով ձախակողմս : Իսկ Արարտաեան այրուձին իմ
առաջնորդութեամբ կեղրոնք պիտի գրաւէ , որուն պիտի
հետեւի կամաւորաց մեծ դունդը :

Վասամ .— Ճիշդ եռանկիւն , ճիշդ Հայկաց կազմած բանակը . Հայոց պատերազմական համաձարը հնարեց այս ձեւը . եռանկիւն բանակ , երեք կողմէ սուր : Հայկ Արարատաց գագաթին վրայ սլացող արծիւներէ տուաւ այս ձեւը . երկու թեւերով թռչիլ և կեռ կտուցով ու սուր ժանիքներով թշնամին մէջտեղին պատեկլ Արամայ այդ արծուածեւ բանակը՝ իր փառքն արծիւի նման եթերի բարձունքը պիտի հասցնէ . . . *

Արամ .— Վասամ , կարծես Սօնեաց լեռան անտառին մէջ ես և դուշակութիւններ կ'ընես : Մշակ , կամաւորաց գունդը այս տեղ առաջնորդէ : (Մշակ կերթայ)

ՏԵՂԱՐԱՆ Ժ.

ԱՐԱՄ ԵՒ ՎԱՏԱՐ

Վասամ .— Տէր , ծերուկներն , աղաքներն ալ , արխն թափել կը փափաքին , այս օրերս կարծես ամէնն վայրենացեր են :

Արամ .— Ժամանակի ողին է այդ անողը :

Վասամ .— Եւ ձեր ցոյց տուած քաջութիւններն :

ՄՇԱԿ ԶՈՐՔԵՐՈՎ ԿՈԽԳԱՅ

Ուրամ .— Աղատութեան նուիրեալ վեհ սրտեր ,
դիւրազգած ոգիներ , դուք որ մահը կը նախընտրէք ,
քան ստրուկի կեանքը . մահը՝ պիտի փախչի ձեզմէ , իբր
ոխերիմ թշնամիէ մը : Մենք ոչ աւարի , ոչ կողոպուտի
և ոչ իսկ փառքի համար կը պատերազմինք , Մենք
մարդկային իրաւանց պաշտպանութեան և աղատու-
թեան համար կը կռուինք . և երկինք զօրավիդ պիտի
լինի մեզ : Օ՞ն անդր ի պատերազմ :

ԶԳԻ Բ. ՎԱՐԱԳՈՅՐՆ



Ա. Բ. Ա. Բ. Ե. Բ. Բ. Ո. Բ.

— զ ժ զ —

ի կողմանը կիս. (լեռան վարագոր)

ՏԵՍԱԲԱՆ Ա.

ԱՐԱՄ, ՄՇՅԱԿ ԵՒ ԿՈՌԱՎԱՐ

Արամ.— Տանուտեարք և զօրապետք, շատ գոհ
եմ ձեղմէ, որ անզուսպ առիւծներու նման կուռեցաք
թշնամեաց դէմ, այն ահեղ պատերազմին ի զուր կը
կը վիճառէր աչերս անբարտաւան Պայտապիսն, զգեստներն
փոխած լինելու էր անշուշտ, որ կարող եղաւ իր զօր-
քերն մեղ դէմ թողլով փախչիլ . զի յանկարծակի բա-
նուկն իր կաղմակերպութիւնը կորմնցուց, երբ այրուծիովս
յարձակեցայ բանակին կեդրոնին վրայ, ուր նշմարած էի
միայն ողեւորութիւն։ Լերինք և բլուրք կապաթովկիոյ
և նոցա բանակի խառնիճաղմննը նպաստեց Պայտապիսի
փախստեան։

Մօսկ.— Սակայն, վատամ դեռ կը հալածէ։

Կոռնակ.— Եթէ իր բիւրաւոր զօրքերը չը լքէր,
ձեր աղեղն կայծակնահար պիտի ընէր Պայտապիսը՝ որ
վատօրէն փախստ։

Արամ.— Փախստեան մէջ թող կորնչի Պայտապիս,

աւազակաց պետը, որ բարբարիկ ցեղերն հաւաքել էլք։ միայն խաղաղ ժողովուրդն կողոպտելու և վնասելու Պէտք է յետ այսորիկ այս կիսավայրենիներն իրենց աշխատանաց արդիւնքն վայելեն, զբաղին երկրագործութեամբ և խաչնարածութեամբ։ Ա՛լ բաւ է՝ որ անգործն գործողի արդիւնքն խլէ։

Մշակ. — Կապաթովկիոյ խեղճ ցեղապետները կաղերսեն որ իրենց կենացը խնայուի։

Արամ. — Խ՞նչ. միթէ հայ զօրքերն զինաթափ ժողովուրդն կը ջարդեն։

Մշակ. — Ո՞չ։

Կոռնակ. — Նահապետ, կը կարծեն որ պիտի ջարդուին։

Արամ. — Վայրենական գաղափար, երբ բռնակալաց և աւազակաց պետերն կ'սպաննուին, նոցա հետեւողք դիւրաւ կը զսպուին և քանի որ Պայապիս կորած է, այլ եւս հարկ չը կայ անզէն ժողովուրդն ճնշել, այլ պէտք է կրթել, Ուստի, Մշակ, զքեղ Մարզպան կը կարգեմ բնդհանուր կապաթովկիոյ։

Մշակ. — Դժուարին պաշտօն մըն է Տէր։

Արամ. — Դժուարին, բայց քաղցր, կը պատուիրեմ քեզ, որ պարտաւորիչ ընես հայ լեզուն, որպէս զի իւմանան ազգի մը վայել կարգերն, կանոններն և օրէնքներն։ Քաղաքակիրթ բարբառն է՝ որ կը բարձրացնէ մտքերն և կազնուացնէ զգացումներն։ Մեծ կորուաս արած չեն լինիր իրենց յատուկ մի քանի տասնեակ բառերը մոռնալով, որք գողոններու, ուտեստի և զիրաք ճանչնալու կը ծառայեն։

ԱՍՏԱՄ ԶՈՐՔԵՐՈՎ, (Երգով մը)

ՎԱՏԱՄ.— Հայկազն նահապետ, բոլոր Կապաթով-կիւն շրջեցայ և ոչ ուրէք ընդդիմութեան պատահեցայ, հեռիէն նշմարեցի փախստականներ, որ լեռներէն վեր կը փախչէին Արամը, Արամը բացաքանչելով՝ զանոնք ձեր փախաքանաց համաձայն հանդարտեցնել տուի: Ի զուր մինչեւ Միջերկրականի եղերքն մի խումբ հալածեցի Պաշտապիսն նոցա մէջ կարծելով:

ԱՐԱՄ.— Ձեր քաջագործութեանց եռանդն զձեղ մղած է հայրենեաց թշնամոյն հետամուտ լինել և այս գովելի է:

ՎԱՏԱՄ.— Նահապետ, հայրենեաց սէրն ու ձեր կոռին էր որ մղեց զիս:

ԱՐԱՄ.— Միրելի զօրապետք և քաջազուն զօրականք, մեզ կերակրող երկրին մեր պարտքն հատուցինք, այլ եւս նորա տուած արդիւնքն ոչ կը փճանաց և ոչ աւարի կը տրուի. խաղաղութիւնը հայրենեաց ամէն կողմն տիրած է և լինչպէս ամենքնիդ իրեւ մի մարմին հետեւեցաք ձեր նահապետին, այնպէս միացէք միշա. ձեր միոյն ունեցած կորուստը՝ զիտցէք որ ամէնուդ ալ է. երբ ձեզմէ մին՝ թշնամանուի օտարէն, զիտցէք թէ՝ ամենքդ ալ կը թշնամանուիք: Մէրը թող տիրէ ձեր վրայ և ոչ մի բան չը կարողանայ հայը՝ հայուն թշնամի ընել: Միութիւնը՝ ձեր սիրոյ կապը լինի և խաղաղութիւնը ձեր հարստութիւնը:

Կոռնակ .— Եւ Արամ հայութեան փառքը և օտարաց սարսափը :

Մշակ .— Հայաստանի պաշտպանը :

Վասամ .— Սակայն Տէր , Բարչամն իր աւազակ խմբերի միջոցաւ կը նեղէ սահմանակից հայերն :

Արամ .— Ուրեմն , կայ մի դործ ալ սիրելիներս , Բարչամի գլուխն դեռ ջախջախուած չէ և նա ալ կ'ուզէ չափուիլ հայոց դիւցազուններու հետ :

Վասամ .— Այո՛ , Տէր , ամէն կողմէ պէտք է ապահովել Հայաստանը . թէպէտ մի փոքր թշնամի է Բարշամը , բայց անով մի բիծ կը մնայ Հայաստանի ոսկեփայլ հօրիզոնի վրայ . պէտք է այն բիծն ալ սրբել :

Կոռնակ .— Այո՛ , մեր զէնքերը թող հանգիստ չառնեն , մինչեւ որ չապահովի Հայաստանը ամէն կողմէ :

Մշակ .— Ծատ ձիչտ է .

Արամ .— Իմ սրախս ալ արձագանքն են այդ խօսքեր , զի մի մարդ՝ երբ իւր հայրենիքն օտար յարձակումներէ չը պաշտպանէ և զայն անկախ վիճակի մէջ չը դնէ . ինքն ազատ չը կրնար համարուիլ , մարդու մը ազատութեան սահմանը , իւր հայրենիքի վիճակէն կախում ունի . հայրենեաց հողն ու ջուրն մարդուս սիրտն ու արիւնն են , երբ բոնաւորք Հայաստանի հողին վրայ ոտք կը դնեն , իմ սրախս վրայ կը կոխեն ու արիւնս կը պըղծեն , Պէտք է պատով մեռնիլ քան պղծուած ապրիլ :

Ամենիք .— Կեցցէ Արամ :

Արամ .— Ուրեմն , մի քիչ հանգիստ առէք ձեր զօրաց հետ , որպէս զի նոր ուժով կոռուինք Բարչամի հետ : (Կոռնակ և Մշակ կ'երթան) :

Ա. Ռ Ա. Մ Ե Խ Ա Ս Ա. Մ

Արամ .— Վաստամ , սիրտս անհանգիստ է և Յոլակ դեռ չեկաւ . այն գառնուկը՝ անպատճառ Սիրանուշի նուէրն էր , որ պատղամաւորաց չէ ուզեր յայտնել իր անունը :

Վաստամ .— Շատ կարելի է , բայց թերեւս այսօք կուգայ Յոլակ և հարկ չէ յուղուիլ :



Ն Ա Ց Կ Պ Ե Խ Ց Ո Ւ Ա Կ

Յոլակ .— (Մեկուսի) եթէ աշխարհիս մէջ դժուարին մի բան կայ , այն ալ տիսուր լուր հաղորդելն է : Հայ կաղն նահապետ , ամէն յաջողութիւնն կարծես իւր ետեւէն մի սեւ դիծ կը թողու , վասպուրականի փամրիչն հիւանդ է և բանակի բժիշկներէն մին կ'ուզէ , չուզեց որ իր քովէն հեռանամ , միշտ պատմել կուտար ձեր ըրած պատերազմներ և շարունակ ձեր վրաց կը խօսէր :

Արամ .— Այս , սիրելի հօրս Հարմայի մահն , աւելցուց իմ սուզ , զի չը տեսաւ նա սիրատոչոր ամոլից միութիւնը . ահ Սիրանուշի հիւանդութիւնը ոչ բժիշկ և ոչ գեղ կուզէ , նորա բժիշկն ու գեղն սէրն է միայն . ահ , մի վախէր Սիրանուշ , Արամ դեռ ողջ է և իւր սրբազն ու խան կը կատարէ , իր պարտքը կը վճարէ հայրենիքին : Ահ Սիրանուշ , քո բժիշկն՝ այս բանտկինն մէջն է և քեզ համար իւր սիրտը կը տրոփէ : Վատամ , ի զուր ինդրեցի քենէ Սոսեաց սոսաւիւնը լսել ու զուշակել : Աւազ , արդեօք նախզգացմունքս իրականութեան պիտի դառնան .

Վատամ .— Տէր նահապետ , սիրտ ա՛ռ և քաջալերուէ :

Արամ .— Սիրանուշ , որքան զօրաւոր է քո սէրն , որ երբ առարկան չը գտնէ , զքեզ կայրէ :

Վատամ .— (մեկուսի) Որքան զօրաւոր է սէրը , որ կը յաղթէ մեր քաջարի , անվեհեր և կորովի դիւցազնին :

Արամ .— (յուզուած) Ո՞հ , աչացս առաջն է կարծես , ահ , մի մեռնիր Սիրանուշ , ինչու կը դիսես զիս այդպէս նոււազեալ , որքան իւր աչերն սեւացեր և իւր ձիւնափայլ դէմքն սպիտակցեր են : Ահ , ինչու կորուսեր ես վարդագոյն այտերդ և է՞ր աղեղանման յօնաքերդ միացուցեր : Ասա , Սիրանուշ , մօտեցիր ինձ , ահ , կուզէ դալ , բայց չէ կարող :

Վատամ .— Ո՞րու հետ կը խօսիս տէր ,

Արամ .— Ահ , երազ էր արդեօք , ո՞ւր ես վատամ—շուտով գնա , լուր ուղղարկել իմ հոգեհաստոր Փամբիշին և ասա , Սիրանուշ , Արամ ողջ է և քեզ կերպէ ... ու շուտով կուզայ ... բայց Բարչամը , ո՛չ , նախ հայրենիքը՝ ապա Սիրանուշը , ախ , ինչ երկսայրի սուր , ո՛վ երկինք :

ՎԱՏԱՄ .— ՏԵՐ , մԵԼԻՆԻՄՔ և յՂԵՄՔ սուրանդակը .
ՔԻՀ ատենէն աւելի փառաւոր յաղթութեամբ ճոխացած
կը գնամք . . . : (Կը մեկնին միասին)

ԱՐԱՄ .— ԱՀ , Սիրանուշ , ո՞հ , հայրենիք . . . ո՞հ
(Կը մեկնի) :

ՏԵՍԱՐԱՆ Ե .

ՅՈՒՅՈՒ (առանձին)

ՅՈՒՅՈՒ .— ԱՐԱՄ սիրոյ ամկոփումն է , որքան կը
սիրէր իւր ծնողքը , այնքան ալ կը սիրէ իր խօսեցեալը ,
և ամէնէն աւելի իր հայրենիքը : Ի՞նքը ամուրի երիտա-
սարդ , բայց հայրական սիրով կը խնամէ օտարածին ժո-
ղովուրդը և կը փափաքի որ անոնք խաղաղ աշխատա-
ւորներ ըլլան : Կը զոհէ անձը ժողովրդին բարութեան ,
թող ճանչնայ աշխարհ թէ՝ հայն կարող է ոչ միայն իր
հայրենիքն պաշտպանել . այլ և անզուսպ և վայրենի ցե-
ղերը կրթութեան ներքեւ առնել և անոնց կարդ կա-
նոն տալ :

ՏԵՍԱՐԱՆ Զ .

ՆՈՅՆ ԵՒ ԿԱՌԵԱԿ

ԿՈՌԱԿ .— Դու առանձին այս տեղ . . .

ՅՈՒՅՈՒ .— ԱՀ , մի ըսէր , երանի թէ չը լինէի :

ԿՈՌԱԿ .— Ի՞նչու :

Յոլակ .— Արտօվհեաեւ , երբ Վասակութականի օրիորութին հիւանդութիւնը գումեցի , Արամ այնպէս յուզուեցաւ որ աչքերս արտասուքով լեցուեցան , այնպէս որ քաջալերական բառ մը իսկ չը կրցի գանել : Հիացայ իր վաեմ սրտին , Ան կրկին հայրենիքը նախընտրեց :

Կոռնիակ .— Երկնայինն ոյժ պէտք է , հոգեհատորը՝ հիւանդ սիրականը ձգելով կուուի երթալ կը հաւատացնեմ քեզ , առ ըրածը , սովորական մարդու գործ չէ :

ՏԵՍԱՐԱՆ Է .

ՆՈՅՆՔ ԵԽ ՄՇԱԿ ԶԻՆՈՒԹՅՈՒՆԻԱ .

Մշակ .— Զօրապետք , Արամ շատ դժուարին պաշատօն մը յանձնեց ինձ . այս կիսավայրիները կրթել և ունոնց սորվեցնել լեզու , կարգ և կանոն . . . :

Յոլակ .— Արամ զիսէ թէ՝ ձեր այդ երիտասարդ վիճակին մէջ ունիք երկիրներ կառավարելու յատկութիւն մը :

Մշակ .— Բայց սակայն . . .

ՏԵՍԱՐԱՆ Ի .

ՆՈՅՆՔ ԵԽ ՄՈՒԺԻՒՆ (յանկարծ)

Մուժիկ .— Զէ՛ , հայը քաջ չէ , Արամն է քաջ :
Յոլակ .— Վայրենի՛ (վրան յարձակել ուզելով) :

կոռնակ .— Թոյլ տուր Յոլակ , մշակ մեր օդնու-
թեան պէտք չունի :

Մօակ .— (Մուժիկի թեւին զարնելով անոր գաշոյնը
կը ձգէ) զնա՛ ճանչցիր հայի ոյժը : (Եւ իր ծիրանիով
յառաջ կը քաշկռտէ կամ ձեռքերն ետին կը կապէ) :

Կոռնակ .— Վայրենի , դիացիր թէ՝ Արամ և Արամ-
եանք քաջ են և եթէ այդպէս չըլլար Արամը՝ Մշակը
ընդհանուր կապաթովկիոյ Մարզպան չէր դնէր :

Մուժիկ .— Ներէ ...

Մօակ .— Ներում չը կա՛յ քեզ . ցիցի վրայ պիտի
ելնէ զլուխդ ,

Մուժիկ .— Ներէ ինձի , հիմա կ'զգամ թէ՝ Հայն ալ
հզօր է :

Յոլակ .— Մշակ , թող դիտնայ թէ հայը վեհանձն ալ
է , զրկէ Արմաւիր և հոն թող ապրի առաս :

Կոռնակ .— Քանի որ , ներէ կը դոչէ :

Մուժիկ .— Ներէ :

Մօակ .— Ասոնք պէտք է խիստ պատժել , ասոնք
բարութիւնը ու վեհանձնութիւնը երկշուռութիւն կը հա-
մարին :

Կոռնակ .— Որովհետեւ վայրենի են :

Յոլակ .— Բայց երբ կը զղջայ , պէտք է զրկել Ար-
մաւիր :

Մօակ .— Լու , զինորնե՛ր շղթայի զարկէք և տա-
րէք Արմաւիր :

Յոլակ .— Ուրեմն , մենք ալ յաղթական երդերու
մելիսինք : (Ամենաքը երգելով կ'երթան) :

ՎԱՐԱԴԻՅԻ ՉՈՐՏՈՐԴ

ՏԵՍԱՐԱԿՆ Ա.

Վասար.— (Սուսերտամերկ . յոդնած և արիւնու կը
մտնէ) վերջապէս սպաննեցի վիշապի որդին , անօրէնը՝
կատարեալ օձի նման կը սողար դէպի ինձ , մի ոստմամբ
կ'ուզէր վզիս փաթթուիլ : Իժի ծննունդը քիչ մնաց խայ-
թէր ինձ , բազմաթիւ վէրքեր ստանալէ յետոյ կրկին չէր
դադրէր : Բարելացիք բոլորը մոգեր են , կախարդեալներ
են , որ կասեն , կատարելապէս ուզիղ է . մէկ քանի վէր-
քով չեն իյնար , սուրը չը թափանցէր . երբ պոչը կարես ,
գլուխը կը շարժի . երբ զլուխը ջախջախես պոչը կրկին
կը տատանի : Փշրեցի զինքը , բայց ես ալ չնշասպառ ե-
ղայ . . . այսչափ վայրենի թշնամւոյ պատահած չէի կեան-
քիս մէջ . ես ալ , այսքան բարբարոս և անգութ եղած
չէի . . . մարդը՝ մարդուն այսչափ ատէ , այսչափ ոխերիմ
թշնամի լինի նորա արիւնը թափելու համար . այսչափ
ջանք ի գործ դնէ : Ի՞նչ անհասկնալի . . . Ի՞նչ վայրենի
վիճակ . . . Ի՞նչու ես այն մարդը սպաննեցի , ով էր նա ,
և ինչ էր արած ինձ . . . յայտնի բան է՝ նա որդիներ ու-
նէր , որոնք որբ մնացին հիմա . . . Ես որբացուցի , յա-
ւիտեանս դժբաղդ արի նորա անմեղ մանուկներն . . . և
ի՞նչու . գաղաններն մեր ըրածն չեն անէր , մարդիկ աւե-
լի չար գաղաններ են , ես յանցաւոր եմ ուրեմն . . . (կը

մտածէ) բայց ո՛չ, ես իմ գաւակներու հացը պաշտպանեցի, որ սոքա եկեր ու կը խլէին . միթէ՞ գազաններն ալ, վոքրիկ թռչուններն ալ, իւրեանց ձագերու կեանքն ու հացը չեն պաշտպաներ . . . իսկ նա՝ ի՞նչու կը կըռուէր, այս անհամար մարդոց բանակը ի՞նչու կը կռուի ու կը մեռնի, նոցա կեանքին ու հացին ո՞վ կը դպչէր . . . ա՞հ, Բարչամ, Բարչամ, քո թագին վրայ մէկ աղամանդ դնելու, քո սին փառաց և յիմար տիտղոսներու վրայ հատ մը եւս աւելցնելու համար, մարդկային աղջի այսքան անմեղ արիւնը թափելու պատճառ կը լինիս . . . է՛հ, քո նախահայր Նեփրովդ եւս, իւր անբարտաւանութիւնը՝ շինել տուած աշտարակին չափ բարձրացուցլ բայց մեր նախահօր Հայկայ, լայնալիճ աղեղէն թուած նետը՝ յերկիր տապալեց անբարտաւանը, ինչպէս ամենասկարողին մէկ ակնարկը՝ մէկ ակնդարտի մէջ, հողի հաւասարցուց աշտարակը, այն անբարտաւանութեան ամբարտակը: Բարելոն կրկին պատժուիլ կ'ուզէ Հայաստանի վրայ յարձակելով: Անգութ Բարչամը հայու արիւն ծծել կ'ուզէ, բայց չը յաջողիր . . . Բոնաւոր, առանց աշխատանքի զեղս ու շռայլ ապրիլ կը փափաքիս և բնիկ գերիներուդ արդիւնքովը չը բաւականալով, հայցօրն ալ գերի անել կ'ուզես և անոնց ոշխատանքն ալափել և ի՞նչ դժոխային միջոցաւ . . . նախկին գերիներու միջոցաւ նոր և օտար գերիներ ստանալ . . . խեղճ Բարելացիք, կոյր աչքով կը կռուիք . . . ի՞նչ շահ ձեղ այս կռուէն, Բարելացիք և հայ ժողովուրդը եղբայր են:

ՆՈՅՆ ԵՒ ՄԻ ԲԱՐԵՆԼՈՅՑԻ ԶԵՆԵԱՅՐ


Զինւոր .— Ո՞չ, ո՞չ, կեանքդ, կեանքդ՝ արեանդ
եմ ծարաւի . ես քու թշնամիդ եմ, ոչ թէ եղբայրդ :
(Առւր ձեռքը | կը յարձակի) :

Վասան .— (Կռուելով) յիմար, մոլեռանդ և կոյք
գործիք, (ետ մզելով) կը խնայեմ կեանքդ, գնա՞ :

Զինւոր .— Պիտի սպաննեմ, քեզ պիտի սպաննեմ . . .

Վասան .— Անպատճառ կ'ուղէ մեռնիլ (մի թեթեւ
վէրք տալով) այս թեթեւ վէրքով գնա ուրեմն :


Զինւորը .— (Կը փախչի) :



Ա. Ս Տ Ա. Մ Ա. Ռ Ա. Ն Զ Բ Ն

Վասան .— Ահ, երբ պիտի գայ այն օրը, որ մար-
դիկ այլ եւս բռնաւորաց ձեռք խաղալիք չը լինելով,
եղբօր պէս միմեանց հետ խաղաղ ապրին, ամէն մարդ
աշխատող լինի և իւր աշխատանքի արդիւնքը ազատու-
թնամբ վայելէ :

(Ոտքի ձայն) Թոյլ քայլերով մէկը այստեղ կը մօտե-
նայ . . . ոհ, Ցոլակն է : (Դէպի Ցոլակին դիմելով) :



Ա. Ա Տ Ա Մ Ե Ւ Ց Ո Ւ Յ Ա Կ

Վասամ .— Աջ բազկէդ արիւն կը հոսի , վիրաւոր ես , ի՞նչ էր քո բազկի յանցանքը , որ այդպէս վիրաւորեցին . . . ի՞նչ էր Անժառառած տիկնոջ մեղքը , որ իւր ամուսինը առանց աջ թեւի լինի և սուր բռնելու անկարող . . .

Յոլակ .— Վասամ , երկար խօսքերու հարկ չը կայ , շուտ վէրքս կապէ , արիւն շատ կորսնցուցի . . . շուտ ըրէ . (Վասամ թաշկինակով ամուր կը կապէ և Յոլակ հանգիստ շունչ քաշելով քիչ քիչ զօրանալով) Վասամ , մինչ այստեղ հետեւեցայ փախստական թշնամիներու , վատերը օձերու նման բլուրներէ վեր կը սողային և խիստ արագ կը փախչէին . բայց մեծ վիշապը չը կրցաւ փախչիլ . . .

Վասամ .— Ի՞նչ Բարչամը մեռաւ :

Յոլակ .— Շնչասպառ ինկաւ վատը , փախչիլ ուղած ժամանակ :

Վասամ .— Ո՞վ էր զայն սպամնող քաջը :

Յոլակ .— Մեր քաջ նահասպետը , անձամբ թուաւեաւէն կայծակի արագութեամբ՝ ջախջախեց գլուխը և սատակած օձի պէս իւր նիզակին ծայրը անցուցած քաշելով բանակը բերաւ , Բարելացիները այս որ տեսան , յուսահատ ցիրուցան փախան և կատարեալ յաղթութիւնը մերը եղաւ :

Վասամ .— Կեցցե՞ս քաջդ Արամ , ահա , կատարուեցան Սօսեաց Արբազան անտառի պատգամները և Արամի

փառքը աշխարհիս ամէն կողմը սոսկմամբ պիտի պատմուի, նա իւր Հայրենիքն ազատեց գերութենէ, և հայրենեաց փրկչի յաւիաենական վառքը շահեցու, Հարկ չը կայ այլ եւս արիւն թափելու, մեր բոլոր թշնամիք փշրուած են և մեր զինուորք ևս կը տոչորուին ընտանեկան կարօտով :

Յոլակ.— Իսկ Նահապետը Վասարուրականի օրիորդի սիրով :

Վասամ. — Այո՛, Յոլակ, և ի՞նչ աստիճան . . . Արամ լինելու է մարդ, որ կարողանայ զգալ այն աստիճան անհուն սէր, և այն աստիճան հայրենասիրութիւն, որ ձգէ ու գոյ կռուի դաշտն։ Արամ հասարակ մահկանացու չէ. նա Սոսեաց անտառի սնսափիւներով օրօրուած, նորա հովանոյն ներքեւ մեծցած մի երկնային էակ՝ է :

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԿՈՅՔ ԵՒ ԵՐԿՈՒ ՎԱՍՊՈԽՐԱՆԱՆՑԻ
Գ. Ա Է Ժ Ա Բ Ե Ռ Պ Վ

Գիւղացին. — (Մանելով միտքերան) ողջոյն ասոմք ձեզ Զօրապետք :

Վասամ. — (Յոլակ զլիսով) ողջոյն շինական եղբարցդ, աւետիս Ձեզ հայրենակիցներ, թշնամիներն փշրուած են և Հայտատան ազատ է։ Եկցցէ՛ մեր քաջ

Նահապետը, երանի և փառք Հայաստանին, որ ունի
այսպէս որդի:

Յոլորը .— Կեցցէ՛ Արամ, կեցցէ՛ Հայաստան .

Յոլակ .— Ի՞նչ կ'ընէ Վասպուրական աշխարհը :

Ա. Գիւղացի .— Հայաստանի ամէն կողմը, խաղաղութիւն, և Զեր յաղթութեանց փառքին համար ուրախութիւն կը տիրէր . . .

Վասամ .— (ընդհատելով և գունաթափ) Ուրախութիւն կը տիրէ՛ր, իսկ հիմա . . .

Ա. Գիւղացի .— Սյժմ, սարսափի և սուզի մէջ են . թէ ի՞նչպէս ընդունին քաջ նահապետն, ու ի՞նչ պատասխան տի տան :

Վասամ .— (անհամբեր) Է՞ն, ճարտասանական ձեւեր հարկաւոր չեն, պարզ ասա՛, ի՞նչ կայ, ի՞նչ է եղած . . .

Բ. Գիւղացի .— (յառաջ գալով) Տէ՛ր, Վասպուրականի օրիորդը՝ մեր Նահապետի հարուր, Մարտասանցի մը դադանութեան զո՞ն գնաց . . .

Վասամ .— Մեռա՛ Սիրանուշը . . . վահ . . . վասերը տեսնելով անպարտելի Արամը, և չը կարենալով ոչ մի կողմէն վիրաւորել, նորա փափուկ աղնիւ սիրտն խայթել ուղեցին ու յաջողեցան :

Յոլակ .— Ա՞հ . . . այն անօրէնը բանեցիք անշուշտ, ուր է, ուր . . .

Բ. Գիւղացի .— Բռնեցանք ու մի ահազին խորույկի վրայ հանեցանք, այդ վատը այրելու միջոցին ասաց. «Ես Զեր իշխանին սիրու խորովեցի, դուք ալ զիս վառեցէք :

Վասամ .— Անօրէ՞նը .

Յոլակ .— Գարշելին, պատմէ՛ եղբայր, պատմէ՛ ի՞նչպէս կատարուեցաւ այդ դաւը :

Ա. Գիւղացի .— Մարաստանցին իրեւ կախարդ ու բժիշկ, Վասպուրական աշխարհէն ներս սպրոլեցաւ, ամէն հրաշքներ գործեց, և այն ալ ձրի . . . :

Վասամ .— Պէտք է հասկնայիք թէ՝ ամէն ձրի բանի տակ մեծ վնաս կայ, վատերը իրենց զէնք ըրած են ձրի մարդասիրութիւնը :

Ա. Գիւղացի .— Վերջապէս հասաւ նպատակին, Վասպուրականի օրիորդն ալ նահապետին հեռանալէն ի վեր հիւանող էր, այդ բժիշկին օգնութեան դիմեցին և նա թոյն տուեց :

Վասամ .— Ա.խ, անօրէնը . . . Արամի անհուն փառաց և ծիրանի հորիզոնին վրայ, մի՛ արեան բիծ՝ իւր տիսուր ստուերը թողուց, Արամի նախզգացումներն սուտ չէին և Սոսեաց անտառը ի զուր տիսուր չէր սոսափէր, երբ Սիրանուշի համար կ'ուզէի լսել :

Յոլակ .— Անօրէնները, իրենց իշխան Նիւքեարը աղատելէ յոյսերնին կարած, վրէմնին այսպէս ստոր եւ վատ միջոցաւ լուծեցին : Բայց Նիւքեար պիտի տուժէ անցուշտ :

Վասամ .— Ես մինչեւ այսօր կարեկցաբար կը խընդրէի Արամէն խնայել Նիւքարի, և բարեկամական դաշինքով յետ դարձնել . բայց հիմա, անկարելի պիտի լինի համոզել Նահապետը այս բանին :

Յոլակ .— Դու կրկին Նիւքարի ներելու խօսքեր կ'ընես :

Վասամ .— Ես մեծ յոյսեր ունէի այդ դաշնակցութեանէն . դրացի աղգեր իրարու հետ խաղաղ ապրելու և զիրար սիրելու են :

Յոլակ .— Արդէն, չափաղանցութեան կը հասցնես քո մարդասիրական խորհուրդներդ, ձգէ, այդ ամէնը,

հիմա վրէժ առնելու ժամանակ է . . . ահա , յաղթական
փողեր հնչեցնելով կուգայ նահապետն , հետն ուրիշ եր-
կու օտարականներ կը բերուին , որո՞նք են՝ ատոնք :

Վասամ .— (յառաջ երթալով) այդ ալ մի դաւ չը
լինի :

ՅԵՍՈՒ. Զ.

ՆՈՅՆԻ, ԱՐՅՈՒ, ՆԵԽԵՎԱՐ ԿԱՊԵՍԱԼ ԵԽ ԶՈՐՔԵՐ
ՕԵՆՑՈՒՄ ԵՐԿՈՒՔԸ ԹԱՐԵՎԱՄԻ ԴԻՖԱԿԲ ԿԸ ԲԵՐԵԲ , ԵՐԿԱՆ ԱՆ-
ՍՐԵՏԵՏԱՆՑԻ ԴԻԽԱՊԱՆԻ ՔՈՎ Ու ՃԻՐԱԲԻ ՔՈՅՆ ԼՐԱՎԱՅ:

Վասամ .— (Ասորեստանցինները հեռացնելով) հեռի՛ ,
մի քիչ հեռի կամպնեցէք . Զեր թանկագին ընծանները
հեռուէն աւելի լաւ կ'երեւին (քշելով) , քիչ հեռու , կը
հասկնա՞ք . ահա , այսպէս , (գառնալով զօրքերուն) զին-
ւորք հակեցէք . (Բարչամի դիմակին նայելով) թշուառ
Բարշամ , (յետոյ Նիւքարին) խեղճ Նիւքար . (Ասորինե-
րուն) ահա , այդպէս հեռի . . .

Արամ .— Սիրելիդ իմ Վասամ , այդպէս ինչո՞ւ յու-
զուած և բարկացած ես , նոքա մեր բարեկամներն են ,
Ասորեստանի Նինոս արքայի դիսպանները , որոնք ինձ
թագ ու ծիրանի ընծայ բերած են , իրենց բարեկամու-
թեան խոստումներու հետ միասին . դեսպանները պէտք է
յարգել իրրեւ բարեկամներ , հիւրեր , այնպէս չէ՞ Վրո-
տամ :

Աւամ .— Այո՛ , Տէր , ես շատ ուրախ եմ նոցա
բիրած ընծայէն և գոհ անոնց կապելիք բարեկամական
դաշինքէն , բայց երբ Զեզմէ քիչ հեռու կանգնին , աւե-
լի ուրախ կը լինիմ (Արամի կը մօտենայ) :

Արամ .— (դէպի ի դեսպաններուն) Յարգելի դսե-
պաններդ մեծին Ասորիստանի . ուրախութեամբ կ'ըն-
դունիմ քաջ արքայ Նինոսի դաշինքն ու նուէրները ,
մի քանի օր հիւր կը լինիք մեր մօտ և յետոյ իմ յար-
գական բարեւո կը տանիք քաջ արքայ Նինոսի :

Դեսպաններէ մին .— Ամենաքաջ , ամենայաղթ
և ամենին յաղթանակող աշխարհի դիւցազնին , մեր ար-
քայի բարեկամական խոստումներու հետ , իւր ընծաները
կը մատուցանեմք Զեզ և ենք Զեր մեծութեան ամե-
նախոնարհ ծառաները :

Արամ .— Շնորհակալ եմ , չնորհակալ , ծոլա՛կ պատ-
ուէ դեսպանները , ինչպէս վայել է հայոց հիւրասիրու-
թեան :

Ցոլակ .— Ապահով եղիք քաջ Նահապետ . (դառ-
նալով դեսպաններուն) ուրախ եմ Տիարք դեսպանք , որ
Զեզ հիւրասիրելու պատիւն ու բաղդը , ինձ յանձնեց
քաջ Նահապետը :

(Արամ և Վատամ այս միջոցին կը խօսակցին)

Դեսպանի .— Երբ քաջ Արամը , աշխարհիս սարսափ
ազգող հայոց նահապետը , իւր բարեկամութիւնը յայտ-
նեց Ասորեստանին և այս փոքր ընծաները սիրով ըն-
դունեց , արդէն չտփազանց պատիւ մը ըրած եղաւ մեղ :

Արամ .— (Բարկացայտ) Հոգիս կասկածներու ան-
տանելի կրակով մի՛ այրեր , ալ չեմ կարող դիմանալ ,
կասկածներու և տարակոյններու մէջ տառապիլը , ամե-
նադառն վիշտ կրելէ վատ է , ասա՛ , (բոլորը սարսափած) :

Վասամ .— Քաջ նահապետ , թող իրենք ասեն , ահա ,
լրաբերներն :

Արամ .— Ասա՛ , վերջապէս դաւադիրը յաջողեր է ,
Սիրանուշը չը կա՞յ այլ եւս : (Նիւքար գունաթափ կը
դողայ) :

Վասամ .— Դժբաղդաբար Տէր իմ , (Նիւքարին) վա՛յ
քեզ , Նիւքար : (բոլորը սարսափահար) :

Արամ .— (մտախոն մի քանի բոպէ) Աշտարակին
ծայրը քամեցէք այդ խարդախ Մարաստանցին , վաղը
արեգական առաջին շողը Նիւքարի սրտին թափանցելով
թող իյնայ Սիրանուշի դիակին վրայ . դուցէ վրիժուց
հուրը՝ մարի նորա դժբաղդ սրտին մէջ . . . :

Ցոլակ .— (կ'ուզէ խօսիլ) Տէր ,

Արամ .— (ձեռքովը լոեցնելով) Բարչամի ջախ-
ջախուած դիակը ոտքերուս տակ , Նիւքարը կապուած
քարշապարանքներս կը լիզէ , Պայտապիս գորտի նման
ջուրը ցատկեց , գոռող Նինոսը՝ ընծաներով դեսպաններ
ուղարկեց և ես տխուր եմ . . . ի՞նչ է կեանքը , Սիրա-
նուշս , իմ հոգւոյս հատորը չկայ . . . դժբաղդ եղայ ես :
Կ'զգայի մի փորձանք , որ գլխիս վրայ կը խաղար :
Վերջապէս իմ փառաց ամենէն փայլուն բոպէին , իջաւ
գլխուս այս հարուածը . . . (կը մտածէ երկար) Հայրենաւ-
կիցներ , Սիրանուշ մեռաւ , բայց հայրենիք հոգի առաւ .
Սիրանուշ կոյս մեռաւ . բայց Հայտաստան վերստին ծըն-
ուեցաւ . Հայրենիքի ազատութեան մեծ գործը՝ մի մեծ
զոհ կը պահանջէր , կը պարծենամ թէ՝ այդ զոհը՝ իմ
հոգեհատոր հայուհին՝ Սիրանուշս եղաւ . . .

ԶԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ

ՊԵՐ Շ Զ





6900

6901

6902

6903

6904

NLC

2013

